Հաստատված է
ՀՀ կրթության տեսչական մարմնի
կառավարման խորհրդի
2023 թվականի նոյեմբերի 30-ի N20-Լ որոշմամբ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄԻՆ

2024 ԹՎԱԿԱՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ՀՀ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԾՐԱԳԻՐ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ԲԱԺԻՆ	ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ	ԷՋԵՐ
1.	ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ, ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ	2-3
2.	ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ	4
3.	ԿԱՌՈՒՑՎԱԾՔ	5
4.	ԸՆԹԱՑԻԿ ՏԱՐՎԱ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՈՒՆԵՑԱԾ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ	5
5.	ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	10
6.	ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԻՃԱԿԸ	11
6.1.	ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ	12
6.2.	ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ	13
6.3.	ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ	15
7.	ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ	17
7.1.	ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ	17
7.1.1	ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ	18
7.1.2	ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	19
7.1.3	ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՏԱՐԵԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	19
7.2	ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ	20
7.2.1	ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ	20
7.2.2	ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	26
7.2.3	ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՏԱՐԵԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	28
7.3.	ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ	32

7.3.1	ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ	32
7.3.2	ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	36
7.3.3	ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՏԱՐԵԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ	37
8.	ԸՆԹԱՑԻԿ ՏԱՐՎԱ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ (I, II, III ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐ)	39
9.	ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ	40
10.	ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ	42
11.	ԿՏՄ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ (Հավելված N 5)	44
12.	ԿՏՄ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ (Հավելված N 6)	49

1. ՀԱՊԱՎՈՒՄՆԵՐ

Ծրագրում գործածվող հապավումները՝

ՀՎ՝	հանրակրթության վարչություն
ՆՄՄԿՎ՝	նախնական և միջին մասնագիտական կրթության վարչություն
ՌԳՍՊՎԳՎ՝	ռիսկի գնահատման, ստուգումների պլանավորման, վերլուծությունների և գնահատման վարչություն
ԻԱՓՎ՝	իրավական աջակցության և փաստաթղթաշրջանառության վարչություն
ՀՀԿԲ՝	հանրության հետ կապերի բաժին
ՆՈՒՀ՝	նախադպրոցական ուսումնական հաստատություն
ՀՈՒՀ՝	հանրակրթական ուսումնական հաստատություն
ՆՄԱՈՒՀ՝	նախնական մասնագիտական (արհեստագործական) ուսումնական հաստատություն
ՄՄՈՒՀ՝	միջին մասնագիտական ուսումնական հաստատություն
ԱՈՒԿ ծրագիր՝	«Աջակցություն ուսուցման կազմակերպմանը» ծրագիր
ԿԳՄՍՆ՝	Կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարություն
ՀՊՁ՝	Հանրակրթության պետական չափորոշիչ

2. ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

ՀՀ կրթության տեսչական մարմինը (այսուհետ նաև՝ տեսչական մարմին կամ ԿՏՄ) վերահսկողություն և օրենքով սահմանված այլ գործառույթներ իրականացնող, ՀՀ կառավարությանը ենթակա պետական մարմին է:

Տեսչական մարմնի նպատակն է՝ օրենքով սահմանված դեպքերում և կարգով նախադպրոցական կրթության, հանրակրթության (միջնակարգ կրթության), նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում օրենսդրության պահանջների պահպանման ապահովումը, կրթության որակի բարձրացման և կրթական ծրագրերի յուրացման ապահովմանն աջակցումը:

Տեսչական մարմնի խնդիրներն են՝ վերահսկողության ոլորտներում ռիսկերի կառավարումը և ՀՀ օրենքների և այլ իրավական ակտերի պահանջների պահպանումը, ինչպես նաև նշված ոլորտներում կանխարգելիչ միջոցառումների իրականացումը:

Հայաստանի Հանրապետության կրթության մինչև 2030 թվականի զարգացման պետական ծրագրով սահմանված հիմնախնդիրներից են՝ կրթության մատչելիության, որակի և արդյունավետության ապահովման հետ կապված բազմապիսի խնդիրները, որոնք արմատական լուծումներ են պահանջում:

Նշված հիմնախնդիրների լուծմանն են ուղղված տեսչական մարմնի նախորդ տարիների և 2024 թվականի գործունեության տարեկան ծրագրերը:

Տեսչական մարմնի գործունեության 2024 թվականի տարեկան ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր) կազմվել է՝ ղեկավարվելով «Տեսչական մարմինների մասին» ՀՀ օրենքով, հաշվի առնելով ՀՀ կառավարության գործունեության ծրագիրը, կրթության բնագավառի մարտահրավերներն ու զարգացման միտումները և տեսչական մարմնի նախորդ տարիների գործունեության արդյունքները՝ կրթության որակի, բովանդակության, վերջնարդյունքների հասանելիության, կառավարման և արդյունավետության ուղղություններով:

3. ԿԱՌՈՒՑՎԱԾՔ



4. ԸՆԹԱՑԻԿ ՏԱՐՎԱ ՁԵՌՔԲԵՐՈՒՄՆԵՐԸ

Համաձայն ԿՏՄ գործունեության տարեկան ծրագրի՝ վերահսկողական գործառույթների արդյունավետության բարելավմանը և կրթության որակի բարձրացմանը միտված գործառույթներ, որոնցից մի քանիսը՝ աշխատանքային պարտականություն համարվելուց զատ, ընդունում ենք որպես ձեռքբերում.

1. ԿՏՄ ղեկավարի համապատասխան հրամաններով ստեղծված աշխատանքային խմբերի կողմից մշակված՝

- **Հայաստանի Հանրապետության կրթության բնագավառի պետական վերահսկողության հայեցակարգը (<u>Հավելված 1</u>).**

Հայեցակարգով սահմանվել են կրթության բնագավառի պետական վերահսկողության հիմնական սկզբունքները, ոլորտները, ուղղությունները և ձևերը, ներկայացվել են կրթության բնագավառի պետական վերահսկողության խնդիրները, առկա դժվարություններն ու կարգավորումների բացերը, լուծմանն ուղղված առաջարկությունները, նոր կարգավորումների ընդունման անհրաժեշտությունը, ակնկալվող հիմնական արդյունքները, առանցքային տիրույթները:

- **ԿՏՄ վերահսկողական գործառույթների մասնակի թվայնացման հայեցակարգը (Հավելված 2).**

Հայեցակարգում ներկայացվել են՝

- թվայնացման տեխնոլոգիաների, թվային հարթակների և գործիքների, թվային տվյալների հավաքագրման և վերլուծության առկա գործիքների, միջազգային փորձի ուսումնասիրության արդյունքները,
- տեսչական մարմնի գործունեության այն հիմնական ուղղությունները, որոնց թվայնացումը կբարելավի տեսչական մարմնի գործունեության արդյունավետությունը, հավաստիությունը, անվտանգությունը և վերջնարդյունքների դրական ազդեցությունը,
- տեխնոլոգիական գործիքների ու հարթակների՝ գործող իրավական ակտերի և տվյալների անվտանգության պահանջներին համապատասխանությունը,
- թվայնացման ընթացքում կամ արդյունքում առաջացող հնարավոր խնդիրները, ռիսկերը (մարտահրավերները), դրանց կանխման կամ ամբողջական վերացման, տվյալների անվտանգության ապահովմանն ուղղված գործողությունների կանխատեսումները:

- **Հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթական գործընթացի որակի, պետական չափորոշչով սահմանված կարողունակությունների գնահատման ձևաթուղթը (Հավելված 3).**

Հանրակրթական ուսումնական հաստատությունների որակի գնահատման ձևաթուղթ ստեղծելու համար հիմք են հանդիսացել ՀՊՉ-ով սահմանված կարողունակությունները (կոմպետենցիաներ) և ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքները: Նշված ձևաթղթի նպատակն է ՀՊՉ-ով սահմանված կարողունակությունների և ուսումնառության ակնկալվող վերջնարդյունքների *փիրապետման* և *կիրառման* մակարդակի գնահատումը:

Այս տարի մշակվել է ՀՊՁ-ով սահմանված 8 կարողունակություններից 1-ի (ժողովրդավարական և քաղաքացիական կարողունակություն) գնահատման մոդելը (ռուբրիկ)՝ ըստ «**Սովորող**», **«Պատասխանատու օղակներ»** և **«Միջավայր»** ուղղությունների: 2024 թվականին նախատեսվում է մշակել ռուբրիկներ ըստ ՀՊՁ-ով սահմանված բոլոր կարողունակությունների:

Հանրակրթական ուսումնական հաստատություններում կրթական գործընթացի որակի գնահատման ռուբրիկները կիրառվելու են կրթության որակին վերաբերող հարցերի գնահատման, ինչպես նաև լավագույն փորձի փոխանակման, հանրայնացման նպատակով:

- **Նախադպրոցական ուսումնական հաստատության ներքին գնահատման ձևաթուղթը (Հավելված 4).**

Ձևաթուղթը մշակվել է նախադպրոցական կրթության ոլորտի ուսումնական հաստատությունների կրթական գործունեության նկատմամբ վերահսկողության առավել արդյունավետ իրականացման նպատակով: Ձևաթղթի կիրարկումը հնարավորություն կտա բացահայտելու նախադպրոցական ուսումնական հաստատություններում ներքին գնահատման իրականացման գործընթացի ուժեղ և թույլ կողմերը, առկա հիմնախնդիրները:

Ձևաթղթի փորձարկումն իրականացվել է հաստատությունների տնօրենների կողմից մինչև 2023 թվականի հոկտեմբերի 24-ը տեսչական մարմնի հանրակրթության վարչության պաշտոնական էլեկտրոնային փոստին ուղարկված փաստաթղթերի (2022-2023 ուսումնական տարվա ներքին գնահատման հաշվետվություն (ըստ հարցաշարի), ներքին գնահատման հանձնաժողովի անդամության թեկնածուների առաջադրման վերաբերյալ մանկավարժական և ծնողական խորհուրդների արձանագրությունների պատճեններ, հանձնաժողովի ձևավորման հրաման) հիման վրա: Փորձարկման արդյունքները ամփոփման փուլում են:

2. Հետադարձ կապի նոր ձևաչափը.

Հանրակրթական ուսումնական հաստատություններում ստուգման ավարտից հետո իրականացվում է հանդիպում հաստատության մանկավարժական աշխատողների հետ՝ ՀՀ ԿՏՄ գործառույթների, ստուգման ընթացքի և արդյունքների համառոտ նկարագրությունը ներկայացնելու, ինչպես նաև կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության վերաբերյալ խորհրդատվություն իրականացնելու նպատակով: Հանդիպման ավարտին մասնակիցների կողմից ներկայացված հարցերին հնարավոր դեպքերում տեղում տրվում են սպառիչ պատասխաններ, անհնարինության դեպքում հարցերը, ինչպես նաև առաջարկությունները միջնորդավորված ներկայացվում են համապատասխան հասցեատերերին: Նշված միջոցառման նպատակը ՀՀ կրթության տեսչական մարմնի գործունեության թափանցիկության ու հրապարակայնության, ինչպես նաև մանկավարժական աշխատողների կողմից ներկայացվող հարցերին և առաջարկներին համապատասխան լուծումներ տալու աշխատանքների կազմակերպման ապահովումն է:

3. Համագործակցությունը.

Շարունակվում է «Գործք» ամսագրի հետ կնքված հուշագրի շրջանակներում իրականացվող համագործակցությունը: Ամսագրում պարբերաբար հրապարակվում են ԿՏՄ հաշվետվություններից համառոտ տեղեկատվություն, տեսչական մարմնի ՀՀԿԲ-ի կողմից տրամադրված նյութեր՝ հանրությանը հետաքրքրող հարցերի վերաբերյալ:

Եռամսյակային պարբերականությամբ՝ լուսաբանելու նպատակով՝ «Գործք» ամսագրի խմբագրությանն են փոխանցում տվյալ եռամսյակի ընթացքում մասնագիտական ուսումնական հաստատությունների կողմից առավել հաճախ բարձրացված հինգ հարցերն՝ իրենց պատասխանների հետ միասին: Առաջին երեք եռամսյակների 15 հարցերն արդեն իսկ լուսաբանվել են «Գործք» ամսագրում, իսկ չորրորդ եռամսյակի 5 հարցերը կլուսաբանվեն ամսագրի հերթական համարում:

USAID-ի, Միջազգային հանրապետական ինստիտուտի, Էթիկայի դպրոցի հետ հետ կնքված հուշագրերի հիման վրա իրականացվող **հ**ամագործակցության շրջանակում մշակվել են տեսչական մարմնի աշխատակազմի վերապատրաստման ծրագրեր:

4. Տեսչական մարմնի ստուգաթերթերի, ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանության լրամշակումը.

Տեսչական մարմնի վերահսկողության բոլոր ոլորտների ստուգաթերթերը լրամշակվել են չափելիության տեսանկյունից: Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի հետ համատեղ լրամշակվել է ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը, ներմուծվել են նոր չափանիշներ, գնահատման նոր կառուցվածք: Մասնավորապես, ոլորտային ռիսկի գնահատման նոր չափանիշներից են նախորդ տարում օրենքով սահմանված կարգով վերապատրաստված մանկավարժական աշխատողների տոկոսային թիվը, նախորդ տարում ոլորտը կարգավորող երկու և ավելի անգամ փոփոխված իրավական ակտերի (ստուգաթերթերում ներառված) տոկոսային թիվը:

5. Թվայնացման աշխատանքների մեկնարկը.

Կրթական տեխնոլոգիաների ազգային կենտրոնի և «Ինստիգեյթ մոբայլ» կազմակերպության հետ համատեղ սկսվել է տեսչական մարմնի վերահսկողության ոլորտների ուսումնական հաստատությունների ռիսկերի գնահատման աշխատանքների թվայնացման գործընթացը:

6. Օրենսդրական փոփոխությունների առաջարկությունները.

ՀՀ կառավարությանը և քաղաքականություն մշակող պետական մարմիններին օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ առաջարկություններ ներկայացված

իրավական ակտերի թիվը նախորդ համապատասխան ժամանակահատվածի համեմատ գրեթե կրկնապատկվել է՝ **2022թ.՝ 27, 2023թ.՝ 53:**

Կարևոր է նշել, որ ԿՏՄ կողմից ներկայացվող առաջարկությունների շուրջ 70%-ը ընդունվել են համապատասխան պետական մարմինների կողմից:

5. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ՆՈՐ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

ԿՏՄ-ն 2024 թվականին նախատեսում է՝

- վերակշռավորել ՀՈՒՀ-երում անցկացվող ստուգումների ստուգաթերթերը՝ ըստ «Հանրակրթության մասին» օրենքի 5-րդ հոդվածով սահմանված՝ հանրակրթության բնագավառում պետության կողմից երաշխավորած՝ յուրաքանչյուր սկզբունքի գնահատումն իրականացնելով սանդղակային սկզբունքով:

- ներդնել ՀՈՒՀ-երի գնահատման սանդղակ՝ ՀՈՒՀ-երում վերոնշյալ սկզբունքների ձևավորման մակարդակը գնահատելու նպատակով: Ըստ սանդղակի՝ նախ կգնահատվի հաստատությունում յուրաքանչյուր սկզբունքի ձևավորման աստիճանը, այնուհետև գնահատում կիրականացվի միաժամանակ ըստ բոլոր սկզբունքների:

- ամբողջացնել ռիսկերի գնահատման թվայնացված գործիքակազմը ռիսկերի գնահատման թվայնացված գործիքակազմ, որը կնպաստի նաև վերահսկողական գործառույթների արդյունավետության բարձրացմանը:

- սկսել ԱՈՒԿ ծրագիրը նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում:

- կիրառել սովորողների ծնողների իրազեկման նոր՝ մոդուլային ձևաչափ:

6. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐԻ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԻՐԱՎԻՃԱԿԸ

2023 թվականի առաջին 3 եռամսյակներում պլանավորված վերահսկողական, ինչպես նաև կանխարգելիչ և իրազեկման բոլոր գործառույթներն իրականացվել են:



2022 թվականին իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների հետևանքների վերացման վերաբերյալ տեսչական մարմնի ղեկավարի կողմից տրված հանձնարարականների (մասամբ կատարված) պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելու նպատակով 2023 թվականի III եռամսյակում իրականացվել են հանձնարարականների կատարման ստուգումներ ՀՀ 4 նախնական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում:

- **Իրականացված գործառույթների արդյունքում կազմված հաշվետվությունները հրապարակվել են տեսչական մարմնի պաշտոնական կայքում. http://www.eib.am/reports/**:

6.1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

2023 թվականի առաջին 3 եռամսյակներում ԿՏՄ 2023 թվականի գործունեության և ստուգումների տարեկան ծրագրերով նախադպրոցական կրթության ոլորտում նախատեսված կանխարգելիչ, իրազեկման և վերահսկողական բոլոր գործառույթներն իրականացվել են:

ԿՏՄ ստուգումների ժամանակացույցում ընդգրկված 11 մանկապարտեզների տնօրենների համար իրականացվել է 1 հեռավար խորհրդատվություն՝ ստուգաթերթերի, ՀՀ օրենսդրության պահանջների մասին իրազեկելու և հնարավոր խախտումները կանխելու նպատակով:

Տնօրենների կողմից հնչեցված հարցերը վերաբերել են

- *նախադպրոցական ուսումնական հաստատություն երեխաների ընդունելության,*
- *մանկավարժական աշխատողների ընտրության (նշանակման) կարգերին,*
- *ղեկավար և մանկավարժական կազմի տարիֆաորակավորման բնութագրերին:*

ԿՏՄ աշխատակիցների կողմից՝ մասնագիտական և մեթոդական աջակցություն ապահովելու նպատակով՝ 2 իրազեկման և խորհրդատվական միջոցառումներ են

իրականացվել ՀՀ 35 նախադպրոցական ուսումնական հաստատությունների տնօրենների, 7 մանկապարտեզների մեթոդիստների մասնակցությամբ:

ԿՏՄ ծառայողների կողմից ՀՀ 6 համայնքապետարանների ***(ՀՀ Գեղարքունիքի մարզի Սևանի, ՀՀ Արագածոտնի մարզի Աշտարակի, ՀՀ Սյունիքի մարզի Գորիսի, ՀՀ Լոռու մարզի Վանաձորի, ՀՀ Արարատի մարզի Արարատի, ՀՀ Շիրակի մարզի Գյումրու համայնքապետարաններ)*** կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումների աշխատակիցների, 95 ՆՈՒՀ-երի տնօրենների և 18 մեթոդիստների համար իրականացվել են 6 առկա խորհրդատվություն, ՀՀ օրենսդրության պահանջների կատարման վերաբերյալ բացատրական աշխատանքներ:

Նախադպրոցական կրթության ոլորտի ուսումնական հաստատությունների կրթական գործունեության նկատմամբ վերահսկողության առավել արդյունավետ իրականացման նպատակով մշակվել է ՆՈՒՀ-երի կողմից իրականացվող ներքին գնահատման ընթացակարգի ուսումնասիրության ձևաթուղթը, որը փորձարկվել է 10 ՆՈՒՀ-երում:

Միջոցառումների արդյունքները ներառվել են ԿՏՄ գործունեության վերաբերյալ եռամսյակային հաշվետվություններում (տես՝ http://www.eib.am/reports/):

6.2. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

2023 թվականի առաջին 3 եռամսյակներում ԿՏՄ 2023 թվականի գործունեության և ստուգումների տարեկան ծրագրերով հանրակրթության ոլորտում նախատեսված կանխարգելիչ, իրազեկման և վերահսկողական բոլոր գործառույթներն իրականացվել են:

18 դպրոցներում իրականացված ստուգումների շրջանակում՝ 6-րդ, 9-րդ և 11-րդ դասարանների սովորողներին տրվել են գրավոր աշխատանքներ «Հայոց լեզու» («Մայրենի») և «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») առարկաներից: Հիմնական դպրոցներում գրավոր աշխատանքներ տրվել են 6-րդ և 9-րդ, միջնակարգ դպրոցներում՝ 6-րդ, 9-րդ և 11-րդ, իսկ ավագ դպրոցներում՝ 11-րդ դասարաններում: Միաժամանակ ուսումնասիրվել են նաև նույն դասարանի՝ նախորդ ուսումնական տարվա նույն առարկաների տարեկան գնահատականները:

Վերահսկողությունն առավել արդյունավետ իրականացնելու, այդ թվում՝ ուսուցիչներին տեղում մեթոդական աջակցություն ցուցաբերելու, դասերի ընթացքում առաջացած խնդիրների բարձրաձայնման և լուծման, կրթության կազմակերպման, ինչպես նաև ուսուցման և ուսումնառության որակը բարձրացնելու նպատակով 2023 թվականի II եռամսյակում ստուգված 16 դպրոցներում իրականացվել է «Աջակցություն ուսուցման կազմակերպմանը» ծրագիրը (ԱՈՒԿ ծրագիր):

Դասալսումները իրականացվել են այն դասարաններում, որտեղ տրվել են գրավոր աշխատանքներ: Մրցութային կարգով ընտրված մասնագետների ներգրավումը իրականացվել է օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ներգրավված (դասալսող) մասնագետները դասալսումների արդյունքում ներկայացրել են սովորողների ուսումնառության, ուսուցիչների դասավանդման, կրթության

բովանդակության և կազմակերպման որակի վերաբերյալ եզրակացություններ, որոնց վերլուծության արդյունքում տեսչական մարմնի կողմից յուրաքանչյուր դպրոցի մասով ներկայացվել են ուսուցման և ուսումնառության առկա վիճակը, բացահայտված խնդիրները, տրվել են կրթական գործընթացի կազմակերպման՝ զարգացման ենթակա (թույլ) ոլորտները բարելավելու ուղղությամբ հասցեական առաջարկություններ:

2023 թվականի առաջին երեք եռամսյակներում ստուգված 79 հանրակրթական ուսումնական հաստատություններում իրականացված ստուգումների շրջանակում կիրառվել է հանրակրթական ուսումնական հաստատության ներառական կրթական միջավայրի գնահատման ձևաթուղթը: Նշված ձևաթղթով գնահատում իրականացվել է 59 դպրոցներում, մնացած 20-ում կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողներ չեն եղել: Գնահատման արդյունքների վերլուծությունները ներկայացվել են լիազոր մարմիններին՝ ԿԳՄՍ նախարարին, մարզպետներին, Երևանի քաղաքապետին:

ԿՏՄ աշխատակիցների կողմից իրականացվել է կանխարգելիչ (աջակցման, խորհրդատվական), իրազեկման 4 հեռավար միջոցառում ՀՀ 95 դպրոցների տնօրենների մասնակցությամբ:

6.3.ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

2023 թվականի առաջին 3 եռամսյակներում ԿՏՄ 2023 թվականի գործունեության և ստուգումների տարեկան ծրագրերով նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում նախատեսված կանխարգելիչ, իրազեկման և վերահսկողական բոլոր գործառույթներն իրականացվել են:

Ըստ բոլոր ստուգաթերթերի՝ ևս 1 ստուգում (ըստ 2 կրթական ծրագրի) իրականացվել է ԿԳՄՍՆ-ից ստացված գրության հիման վրա: Խախտումներ են արձանագրվել թե՛ ըստ նախնական մասնագիտական, թե՛ միջին մասնագիտական կրթական ծրագրերի ստուգման արդյունքում:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական ուսումնական հաստատություններում իրականացված ստուգումների շրջանակում (ըստ նախապես ընտրված մասնագիտությունների) գնահատվել է կրթական գործընթացի որակը՝ համաձայն կրթության որակի գնահատման ձևաթղթի:

- **Իրականացվել է շրջանավարտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների՝ ժամանակակից պահանջներին համապատասխանության և ուսումնական պրակտիկայի արդյունավետ կազմակերպման գնահատում՝ ըստ գործատուների գնահատման արդյունքների: Գնահատման արդյունքների վերլուծությունները՝ համապատասխան առաջարկներով, ուղարկվել են ուսումնական հաստատությունների տնօրեններին:**

Ներառական կրթական միջավայրի գնահատում չի իրականացվել ՆՄԱՈՒՀ-ներում և ՄՄՈՒՀ-ներում՝ կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների բացակայության պատճառով:

- **Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող 10 ուսումնական հաստատություններում փորձարկվել է լիցենզավորման պարտադիր պահանջների և պայմանների ուսումնասիրության գործիքակազմը:**
  Փորձարկման արդյունքները ամփոփման փուլում են:

ԿՏՄ աշխատակիցների կողմից իրականացվել է 3 հեռավար կանխարգելիչ միջոցառում (մեթոդական աջակցության, խորհրդատվական)՝ 71 տնօրենների մասնակցությամբ:

ՀՀ Շիրակի մարզի 18 ուսումնական հաստատությունների տնօրենների և փոխտնօրենների (4), մանկավարժական աշխատողների (6), ուսանողական խորհրդի նախագահների և ուսանողական խորհրդի կազմից՝ կառավարման խորհրդի 70 անդամների մասնակցությամբ իրականացվել է 1 առկա հանդիպում:

7. ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

Կրթական գործունեության տեսանկյունից ուսումնական հաստատության ռիսկը կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ սահմանված՝ սովորողների (երեխաների) կրթական իրավունքի պետական երաշխիքների պահպանմանը, կրթության որակի բարձրացմանը, կրթական ծրագրերի յուրացմանը, պետական կրթական չափորոշիչների պահանջների կատարմանը խոչընդոտող գործոնների ի հայտ գալու հավանականությունն է՝ հաշվի առնելով դրանց բացասական հետևանքները:

7.1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

Նախադպրոցական կրթության ոլորտում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում արձանագրված հիմնական խնդիրները վերաբերել են՝



7.1.1. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

Նախադպրոցական կրթության ոլորտում բացահայտված ռիսկերի նվազեցման, ուսումնական հաստատությունների գործունեության արդյունավետության և դրանից բխող՝ կրթության որակի բարձրացման նպատակով իրականացված ծրագրային 11 ստուգումների արդյունքում արձանագրվել է 71 խախտում:

Խախտումներից 30-ը (42%) վերաբերել են մանկապարտեզում սաների համակազմի ձևավորմանը, 22-ը (31%)՝ ֆիզիկական միջավայրին, 15-ը (21%)՝ կադրային նշանակումներին:

Նախադպրոցական կրթության ոլորտում հիմնական ռիսկերը, որոնք խոչընդոտ են հանդիսանում երեխաների կրթական իրավունքի պահպանմանը՝

- համապատասխան որակավորում չունեցող մանկավարժական աշխատողների առկայությունն է,
- ֆիզիկական միջավայրի՝ նախադպրոցական կրթության չափորոշչի պահանջներին անհամապատասխանությունն է,
- ՆՈՒՀ-ում համակազմի ձևավորմանը վերաբերող խախտումների առկայությունն է՝ թե՛ խմբերի ձևավորման, թե՛ ուսուցման կազմակերպման տեսանկյունից:

7.1.2. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Նախադպրոցական կրթության ոլորտում իրականացված ստուգումների արդյունքում արձանագրված 71 խախտումներից 28-ի վերաբերյալ տրվել են հանձնարարականներ:

Ստուգված 11 ՆՈՒՀ-երից 4-ում տրված 15 հանձնարարականների կատարման ժամկետը լրացել է 2023 թվականի III եռամսյակում:

Բոլոր 15 հանձնարարականները վերաբերել են ՆՈՒՀ-ի ֆիզիկական միջավայրը նախադպրոցական կրթության պետական կրթական չափորոշչին համապատասխանեցմանը:

Հանձնարարականների կատարման վերաբերյալ գրություններ են ստացվել 2 ՆՈՒՀ-երից, որոնց տրված 10 հանձնարարականները կատարվել են: Մյուս 2 ՆՈՒՀ-երից հանձնարարականների կատարման վերաբերյալ գրություններ չեն ստացվել:

7.1.3. ՆԱԽԱԴՊՐՈՑԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՏԱՐԵԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Նախադպրոցական կրթության ոլորտի ուսումնական հաստատությունների կրթական գործունեության նկատմամբ վերահսկողությունն առավել արդյունավետ իրականացնելու նպատակով՝

- մշակված՝ ՆՈՒՀ-երի կողմից իրականացվող ներքին գնահատման ընթացակարգի ուսումնասիրության ձևաթղթի կիրառմամբ վերահսկողություն կիրականացվի 6 ՆՈՒՀ-երում:
- կմշակվի ՆՈՒՀ-ի կրթադաստիրակչական միջավայրի որակի գնահատման ռուբրիկ, որը կփորձարկվի ստուգվող ՆՈՒՀ-երում:

- կիրականացվեն ՆՈՒՀ ստուգաթերթերի և ոլորտի իրավական ակտերի վերաբերյալ իրազեկման աշխատանքներ:
- նախադպրոցական կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների պահպանման վերաբերյալ բացատրական աշխատանքներ կիրականացվեն ՀՀ Շիրակի մարզի Արթիկի, ՀՀ Արագածոտնի մարզի Թալինի, ՀՀ Լոռու մարզի Ալավերդու, ՀՀ Արարատի մարզի Արտաշատի, ՀՀ Արմավիրի մարզի Մեծամորի համայնքապետարանների աշխատակազմերի կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումներում:

Համաձայն 2024 թվականի ստուգումների տարեկան ծրագրի՝ կիրականացվեն ստուգումներ 6 ՆՈՒՀ-երում: Ըստ անհրաժեշտության կիրականացվեն նաև նախորդ ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ տեսչական մարմնի ղեկավարի կողմից տրված հանձնարարականների պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելուն ուղղված ստուգումներ:

7.2. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏ

7.2.1. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

Հանրակրթության ոլորտում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում արձանագրված հիմնական խնդիրները վերաբերել են՝



Վերահսկողական գործառույթների շրջանակում ՀՈՒՀ-երի 6-րդ, 9-րդ և 11-րդ դասարանների սովորողներին տրված «Հայոց լեզու» («Մայրենի») և «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») առարկաների գրավոր աշխատանքների արդյունքները[1] այսպիսին են.



Միջին գնահատականը կազմել է 5.5 («Բավարար») միավոր:



Միջին գնահատականը կազմել է 4.8 («Բավարար») միավոր:

[1] Գնահատումն իրականացվել է 10 միավորային սանդղակով՝ 1-3 միավոր՝ «Անբավարար», 4-6 միավոր՝ «Բավարար», 7-8 միավոր՝ «Լավ», 9-10 միավոր՝ «Գերազանց»:

Ստուգված 16 դպրոցներում՝ ԱՈՒԿ ծրագրի շրջանակում՝ դասալսողների ներկայացրած եզրակացությունների, ինչպես նաև նրանց սովորողների գրավոր աշխատանքների արդյունքների հիման վրա գնահատվել են նաև ուսուցիչները[2]:

Այս համատեքստում նշված **16** դպրոցներում դասալսումներ են իրականացվել **113**՝ հայոց լեզվի և գրականության **59** և մաթեմատիկայի **54** ուսուցիչների մոտ: Յուրաքանչյուր ուսուցչի մոտ իրականացվել է առնվազն 3 դասալսում:

Ուսուցիչների գնահատման միջինացված արդյունքներն, ըստ առարկաների, ներկայացված են ստորև (աղյուսակ 1).

Աղյուսակ 1

Ուսուցիչների գնահատման միջին արդյունքներ՝ ըստ առարկաների

Բնութագրիչներ	***Հայոց լեզու***	***Մաթեմատիկա***
Ուսուցիչների՝ ՏՀՏ իմացությունն ու կիրառումը ուսուցման ընթացքում	**3.3 («Լավ»)**	**3.1 («Լավ»)**
Դասերի արդյունավետությունը	**3.3 («Լավ»)**	**3.4 («Լավ»)**
Ուսուցչի դասավանդած բոլոր դասարաններում ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքներից անբավարար (0-3) գնահատված սովորողների միջին տոկոսային թվի հաշվարկային գնահատականը (0-10%՝ 4, 11-20%՝ 3, 21-35%՝ 2, 36% և ավելին՝ 1)	**2.8 («Լավ»)**	**2.4 («Բավարար»)**
Ստուգման ընթացքում տրված գրավոր աշխատանքներից և նույն սովորողների՝ տվյալ առարկայի նախորդ տարվա տարեկան «Անբավարար» գնահատականների տարբերության հաշվարկային միավորը (0-10%՝ 4, 11-20%՝ 3, 21-35%՝ 2, 36% և ավելին՝ 1)	**2.9 («Լավ»)**	**2.5 («Լավ»)**
Ուսուցիչների ընդհանուր գնահատական	***3.1 («Լավ»)***	***2.9 («Լավ»)***

Համաձայն վերոնշյալի՝ թե՛ սովորողների, թե՛ ուսուցիչների պարագայում՝ արդյունքները համեմատաբար ցածր են «Մաթեմատիկա» առարկայից:

Դասալսողների կողմից ներկայացված դասալսումների եզրակացությունների հիման վրա, յուրաքանչյուր դպրոցի մասով, կատարվել են վերլուծություններ: Վերլուծությունների

[2] Ուսուցիչների գնահատումն իրականացվել է 4 միավորային (4՝ «Գերազանց», 3՝ «Լավ», 2՝ «Բավարար», 1՝ «Անբավարար») սանդղակով:

արդյունքում վերհանված հիմնական խնդիրները, ըստ գնահատման ձևաթղթի բաժինների, այսպիսին են՝

Ա) Ուսումնական նպաստավոր միջավայր

- ՏՀՏ միջոցները դասավանդման գործընթացում հիմնականում չեն կիրառվում, կամ ոչ արդյունավետ են կիրառվում:
- Ուսումնաօժանդակ նյութերի կիրառումը սահմանափակ է:
- Դասարանի կահավորանքը հաճախ հարմարեցված չէ ուսումնական գործունության տեսակներին, ինչպես նաև բոլոր սովորողների կարիքներին:
- Դասաժամի ոչ ճիշտ պլանավորումը, մասնավորապես՝ ժամանակի ոչ ճիշտ բաշխումը, աշխատանքային հստակ կանոնների սահմանումը հաճախ հանգեցնում են դասի արդյունավտության նվազեցմանը:

Բ) Դասավանդում

- Դասերին հաճախ չեն ներկայացվում կամ հստակ սահմանվում դասի նպատակները, վերջնարդյունքները, ինչպես նաև որոշ դեպքերում դասարանային առաջադրանքները, ինչպես նաև կիրառվող մեթոդները միտված չեն վերջնարդյունքների ամբողջական ապահովմանը:
- Որոշ դեպքերում դասերը չեն արտացոլում միջառարկայական կապերը, առօրյայի հետ կապը, կիրառական նշանակություն ունեցող հարցեր և առաջադրանքներ հազվադեպ են առաջադրվում:
- Ոչ բոլոր սովորողներն են ներգրավված դասերին, կան պասիվ սովորողներ:
- Սովորողների ընկալման կամ իմացության մակարդակի ստուգումը հաճախ մակերեսային է իրականացվում, չեն պահանջվում հիմնավորումներ:
- Չեն կիրառվում գնահատման տարբեր ձևեր և մեթոդներ, մասնավորապես՝ ձևավորող գնահատում գրեթե չի իրականացվում, հաճախ գնահատականները չեն հիմնավորվում, մեկնաբանվում, խրախուսման ձևեր հազվադեպ են կիրառվում:

- Հետադարձ կապի ապահովումը հիմնականում թույլ է, տնային առաջադրանքները ոչ միշտ են ստուգվում, ոչ բոլոր անհասկանալի հարցերին է անդրադարձ կատարվում:

Գ) Կարողունակությունների ձևավորում

- Հաճախ առաջադրվող հարցերն ու առաջադրանքները միտված չեն սովորողների քննադատական և ստեղծագործական մտածողության զարգացմանը:
- Որոշ դեպքերում սովորողներին հնարավորություն չի ընձեռվում ինքնուրույն գտնել իրենց սխալները, հարցերին տալ հիմնավորումներ:
- Ոչ բոլոր սովորողներին է տրվում իրենց սեփական կարծիքը հայտնելու, ընտրության, դերեր և պարտականություններ ստանձնելու հնարավորություններ:

Դպրոցներում ներառական կրթական միջավայրի գնահատման գործընթացն իրականացվել է ներառական կրթական միջավայրի գնահատման ձևաթղթի համաձայն, որը բաղկացած է «Ուսումնական միջավայր», «Ֆիզիկական միջավայր» հավելվածներից: Հավելվածները բաղկացած են ներառական կրթական գործընթացին վերաբերող տարբեր բնութագրիչներից և դրանց համապատասխան գնահատման չափանիշներից: Բնութագրիչների գնահատումն իրականացվել է նախորդող 3 ուսումնական տարիների տեղեկատվության հիման վրա:

Գնահատման արդյունքների վերլուծության արդյունքում առանձնացվել են դպրոցների կողմից արդյունավետ իրականացվող և զարգացման ենթակա գործառույթները: Մասնավորապես՝

- ***արդյունավետ իրականացվող գործառույթները, չնայած առկա բացթողումներին,*** հիմնականում վերաբերում են կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսուցման գործընթացի կազմակերպման համար իրականացվող ծառայություններին՝ ***դպրոցական և տարածքային մակարդակներում:***

- ***զարգացման ենթակա գործառույթները հիմնականում վերաբերում են*** կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների ուսուցման գործընթացի կազմակերպման համար ***ֆիզիկական միջավայրի ապահովմանը:***

Դպրոցներն հիմնականում ապահովված չեն՝

- սովորողի անխոչընդոտ տեղաշարժն ապահովող դպրոցի ներքին ֆիզիկական միջավայրով:

Մասամբ են ապահովված՝

- տեսողության խանգարումներ ունեցող սովորողների համար՝ դեղին գծերով, ուղենշող սալիկներով, տարածական կողմնորոշման ձայնային ազդանշաններով,
- սայլակով տեղաշարժվող սովորողների համար՝ դասասենյակների և սանհանգույցների համապատասխան լայնությամբ դռներով, սայլակի չափերին համապատասխան բարձրությամբ սեղաններով, ինչպես նաև դասասենյակում նստարանի շարքերի միջև պահպանված չէ համապատասխան հեռավորութունը,
- սայլակով տեղաշարժվող սովորողների համար՝ անմիջապես դպրոցի մուտքի մոտ, աստիճանների կողքից՝ չսայթաքող, դիմացկուն թեքահարթակով.
- հարկից հարկ տեղափոխվելու համար մատչելիությունն ապահովող վերելակով, այլ սարքավորումներով և հարմարանքներով,
- սովորողների համար մատչելի ուսումնական նյութերով՝ էլեկտրոնային, խոսող, բրայլյան տառատեսակներ, պարզեցված և հեշտ ընկալելի տեքստեր, ռելիեֆային նկարազարդումներով գրքեր, թեստեր, նկարազարդ նյութեր, ժեստերի լեզվով թարգմանությամբ ապահովված ուսումնական տեսաֆիլմեր:

- **Հանրակրթության ոլորտում հիմնական ռիսկերը, որոնք խոչընդոտում են սովորողների կրթական իրավունքի պահպանմանը, կրթության որակի բարձրացմանը, կրթական ծրագրերի յուրացմանը՝**
  - **համապատասխան որակավորում չունեցող մանկավարժական աշխատողների, իրենց պաշտոնային պարտականությունները ոչ պատշաճ կատարող տնօրենների, տնօրենների տեղակալների, ուսուցիչների առկայությունն է,**
  - **կրթության առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող սովորողների համար ֆիզիկական միջավայրի ոչ բավարար ապահովվածությունը:**

Համապատասխան որակավորում չունեցող մանկավարժական աշխատողների, իրենց պաշտոնային պարտականությունները ոչ պատշաճ կատարող վարչական և մանկավարժական աշխատողների, սահմանվածից մեկ դասարան բարձր կամ ցածր դասարան ընդունված սովորողների առկայության դեպքում խախտվում են սովորողների կրթական իրավունքները:

7.2.2. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում բացահայտված ռիսկերի նվազեցման, ուսումնական հաստատությունների գործունեության արդյունավետության և դրանից բխող՝ կրթության որակի բարձրացման նպատակով հանրակրթության ոլորտում իրականացված ծրագրային 79 ստուգումների արդյունքում արձանագրվել է 1240 խախտում:

Խախտումների հետևանքների վերացման նպատակով տրվել է 175 հանձնարարական (աղյուսակ 2):

Աղյուսակ 2

ՍՏՈՒԳՎԱԾ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԹԻՎԸ	ՏՐՎԱԾ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԹԻՎԸ
79	**1240**	**175**

Ստուգումների արդյունքների վերաբերյալ հաշվետվությունները ուղարկվել են ԿԳՄՍ նախարարին, հրապարակվել են ԿՏՄ պաշտոնական կայքում: Յուրաքանչյուր եռամսյակ հանձնարարականների կատարման ընթացքի վերաբերյալ գրություններ են ուղարկվել համապատասխան լիազոր մարմինների ղեկավարներին՝ չկատարված կամ մասամբ կատարված հանձնարարականների վերբերյալ միջոցներ ձեռնարկելու և տեսչական մարմնին տեղեկացնելու առաջարկով:

ԱՈՒԿ ծրագրի շրջանակում իրականացված դասալսումների, գնահատման արդյունքների վերաբերյալ վերլուծությունները՝ հասցեական առաջարկներով՝ տրամադրվել են դպրոցների տնօրեններին:

Ներառական կրթական միջավայրի գնահատման արդյունքների վերլուծությունները ներկայացվել են համապատասխան լիազոր մարմինների ղեկավարներին՝ զարգացման ենթակա գործառույթներն (բնութագրիչները) ըստ անհրաժեշտության բարելավելու ուղղությամբ միջոցներ ձեռնարկելու և արդյունքների մասին տեսչական մարմնին տեղեկացնելու վերաբերյալ առաջարկով:

2023 թվականի առաջին 3 եռամսյակներում, ըստ ստուգումների ծրագրի, ստուգված 79 ՀՈՒՀ-երից 2-ի դեպքում ՀՀ կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտումներ չեն արձանագրվել:

Ստուգված 79 ՀՈՒՀ-երից 53-ի դեպքում տրված հանձնարարականների կատարման ժամկետը լրացել է 2023 թվականի առաջին 3 եռամսյակներում (աղյուսակ 3):

Աղյուսակ 3

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԹԻՎԸ

ՏՐՎԱԾ	ԿԱՏԱՐՎԱԾ	ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ	ՉԿԱՏԱՐՎԱԾ
164	**118**	**27**	**17**

Հարկ է նշել, որ 2 դպրոցներ չեն ներկայացրել գրություններ 2 հանձնարարականների կատարման վերաբերյալ:

Հանրակրթության ոլորտում չկատարված կամ մասամբ կատարված հանձնարարականները հիմնականում վերաբերում են կադրային նշանակումներին:

7.2.3. ՀԱՆՐԱԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՏԱՐԵԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Հանրակրթության (միջնակարգ կրթության) ոլորտում 2024 թվականին նախատեսված ստուգումների ընթացքում սովորողների մնացորդային գիտելիքների մակարդակը որոշելու նպատակով առնվազն 40 հանրակրթական դպրոցների 6-րդ, 9-րդ և 11-րդ դասարանների սովորողներին կտրվեն գրավոր աշխատանքներ «Հայոց լեզու» («Մայրենի») և «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») առարկաներից:

Գրավոր աշխատանքների արդյունքները, որպես վիճակագրական տվյալներ, կգործածվեն տեսչական մարմնի կողմից իրականացվող վերլուծական աշխատանքներում:

Հիմնական դպրոցներում գրավոր աշխատանքներ կտրվեն 6-րդ և 9-րդ, միջնակարգ դպրոցներում՝ 6-րդ, 9-րդ և 11-րդ, իսկ ավագ դպրոցներում՝ 11-րդ դասարաններում: Միաժամանակ կուսումնասիրվեն նաև նույն դասարանի՝ նախորդ ուսումնական տարվա նույն առարկաների տարեկան գնահատականները:

2024 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ներառված ուսումնական հաստատություններում ստուգումները կիրականացվեն ըստ բոլոր ստուգաթերթերի:

Նախատեսվել է 2024 թվականին ԱՈՒԿ ծրագիրն իրականացնել ստուգվող դպրոցներից 40-ում: Մասնավորապես՝

- ուսումնական պարապմունքների լսումներ, դասավանդողի և սովորողի գործողությունների դիտարկում, գրավոր առաջադրանքների միջոցով սովորողների գիտելիքների գնահատում.
- դասավանդողի մանկավարժական-մեթոդական կարողությունների, մասնագիտական գիտելիքների, տեղեկատվական և հաղորդակցական տեխնոլոգիաների կիրառման զարգացմանն ուղղված մեթոդական աջակցության տրամադրում.
- ուսումնական պարապմունքների լսումների, սովորողների գիտելիքների գնահատման արդյունքների միջին ցուցանիշի հիման վրա տվյալ առարկայի դասավանդման բնութագրի կազմում, մասնագիտական կարծիքի (հաշվետվետվություն, եզրակացություն) ներկայացում և այլն:

Գործընթացի նկարագիրը

- Դասալսումները կիրականացվեն այն դասարաններում, որտեղ կտրվեն գրավոր աշխատանքներ:
- Դասալսում իրականացնող մասնագետներին ներկայացվող պահանջներին բավարարող անձանց հետ կիրականացվի հարցազրույց, որի արդյունքում առաջնահերթությունը կտրվի առնվազն առաջին աստիճանի որակավորման տարակարգ ունեցող կամ կամավոր ատեստավորում անցած մասնագետներին:
- Ներգրավված (դասալսող) մասնագետները դասալսումների արդյունքում կներկայացնեն սովորողների ուսումնառության, ուսուցիչների դասավանդման և կրթության բովանդակության և կազմակերպման որակի վերաբերյալ եզրակացություններ, որոնց վերլուծության արդյունքում տեսչական մարմնի կողմից առավել ճշգրիտ կներկայացվեն հանրակրթական դպրոցներում

ուսուցման և ուսումնառության առկա վիճակը, բացահայտված խնդիրները, դրանց լուծմանն ուղղված առաջարկությունները:

- Ուսումնական հաստատություններին կներկայացվեն կրթական գործընթացի կազմակերպման՝ զարգացման ենթակա (թույլ) ոլորտները բարելավելու ուղղությամբ հասցեական առաջարկություններ, իսկ կրթության պետական կառավարման լիազոր մարմնին, տարածքային կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններին՝ կրթության որակի առկա վիճակի մասին հաշվետվություններ, վերլուծական եզրակացություններ և համապատասխան առաջարկություններ:

Ստուգման գործընթացի շրջանակներում ՀՈՒՀ-երում կիրականացվի ներառական կրթական միջավայրի գնահատում՝ ըստ լրամշակված գործիքակազմի:

Ավարտին կհասցվի՝ ըստ ՀՊՁ-ով սահմանված կարողունակությունների՝ ՀՈՒՀ-ի կրթական գործընթացի որակի գնահատման ռուբրիկների մշակման գործընթացը: Այն կփորձարկվի առնվազն 10 ՀՈՒՀ-երում:

Համաձայն 2024 թվականի ստուգումների տարեկան ծրագրի՝ ստուգումներ կիրականացվեն 112 ՀՈՒՀ-երում: Ըստ անհրաժեշտության կիրականացվեն նաև նախորդ ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների հետևանքների վերացման վերաբերյալ տեսչական մարմնի ղեկավարի կողմից տրված հանձնարարականների պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելուն ուղղված ստուգումներ:

Կիրականացվեն ՀՈՒՀ ստուգաթերթերի և կրթության բնագավառը կարգավորող նորմատիվ իրավական ակտերի վերաբերյալ իրազեկման աշխատանքներ:

Ստուգումների արդյունքում ձևավորված կշռային միավորները (ուսումնական հաստատությանների անհատական ռիսկի երկրորդ բաղադրիչ) տեսչական մարմնին հնարավորություն չեն տալիս ստանալ որակական գնահատականներ ուսումնական հաստատությունների կրթական, կառավարման գործընթացների վերաբերյալ: Այդ

պատճառով տեսչական մարմինը նախատեսում է վերակշռավորել ստուգումների անցկացման ստուգաթերթերը:

- **Պայմանավորված հանրակրթության ոլորտի ուսումնական հաստատությունների թվով (վերահսկվող 2647 ուսումնական հաստատություններից 1394-ը)՝ 2024 թվականին կվերակշռավորվեն ՀՈՒՀ-երում անցկացվող ստուգումների ստուգաթերթերը՝ ըստ «Հանրակրթության մասին» օրենքի 5-րդ հոդվածով սահմանված՝ հանրակրթության բնագավառում պետության կողմից երաշխավորած սկզբունքների: Վերակշռավորված ստուգաթերթերը կփորձարկվեն 2024 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ներառված քաղաքային, համայնքային առնվազն 2-ական հիմնական, միջնակարգ, ավագ դպրոցներում:**

Կմշակվի ՀՈՒՀ-երի գնահատման սանդղակ՝ ՀՈՒՀ-երում վերոնշյալ սկզբունքների ձևավորման մակարդակը գնահատելու նպատակով: Ըստ սանդղակի՝ նախ կգնահատվի հաստատությունում յուրաքանչյուր սկզբունքի ձևավորման աստիճանը, այնուհետև գնահատում կիրականացվի միաժամանակ ըստ բոլոր սկզբունքների:

Ստուգաթերթերի հարցերի նման ձևաչափով վերակշռավորումը հնարավորություն կտա վերահսկողության արդյունքում թիրախավորել ՀՈՒՀ-երում առկա խնդիրներն՝ ըստ պետության կողմից երաշխավորված սկզբունքների, մարդկային և ֆինանսական ռեսուրսներն ուղղելով նոր տրամաբանությամբ վերադասավորված առավել ռիսկային ՀՈՒՀ-եր:

Ըստ անհրաժեշտության կիրականացվեն նաև նախորդ ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ տեսչական մարմնի ղեկավարի կողմից տրված հանձնարարականների պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելուն ուղղված ստուգումներ:

7.3. ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ

7.3.1. ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ԱՌԿԱ ԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԲԱՑԱՀԱՅՏՎԱԾ ՌԻՍԿԵՐԸ

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում իրականացված վերահսկողական գործառույթների արդյունքում արձանագրված հիմնական խնդիրները վերաբերել են՝

- մանկավարժական կադրերի նշանակմանը և ուսանողների ընդունելությանը՝ 5-ական հաստատություններում,
- վերականգնմանը և տեղափոխմանը՝ 4-ական հաստատություններում,
- լիցենզիայի բացակայությանը՝ 3 հաստատություններում,
- մանկավարժական աշխատողների վերապատրաստման գործընթացին և ավարտական փաստաթղթերի պատվիրմանը, բաշխմանը, հաշվառմանը և պահպանմանը՝ 2-ական հաստատություններում,
- խորհրդի գործունեությանը, պետական ամփոփիչ քննությունների կազմակերպմանը և անցկացմանը, չափորոշչային պահանջների համապատասխանեցմանը՝ 1-ական հաստատություններում:

Ստուգումների շրջանակում իրականացվել է մասնագիտությունների կրթական գործընթացի որակի գնահատումներ՝ ըստ մշակված ձևաթղթերի:

Կրթության որակի գնահատման տվյալների վերլուծության արդյունքում առանձնացվել են այն խնդիրները, որոնք կարող են ազդել միջին մասնագիտական հաստատություններում մրցունակ մասնագետների պատրաստման որակի վրա: Ըստ գնահատման արդյունքների համադրման ու վերլուծության, ձևաթղթերի և հարցաթերթերի տվյալների՝ հաստատություններում առկա են գործընթացներ, որոնց արդյունավետությունը նկատելի է (ուժեղ կողմեր), սակայն միաժամանակ առկա են գործընթացներ, որոնք ունեն բարելավման անհրաժեշտություն (զարգացման ենթակա գործառույթներ).

1. Քոլեջներում՝ որպես ուժեղ կողմեր հիմնականում նշվել են.

- տվյալ մասնագիտության ուսանողների թվի գրանցած բարձր արդյունքը.
- ուսանողների բավարարվածության բարձր մակարդակը քոլեջում տրամադրվող տեսական և գործնական գիտելիքներից, կիրառվող մանկավարժական մեթոդներից.
- ուսանողների գիտելիքներին համապատասխան գնահատումը.
- քոլեջի ուսանողների հաճախումների նկատմամբ վերահսկողությունը.
- ուսանողների ինքնուրույնությունն ու ակտիվությունը դասախոսների կողմից խրախուսվելը.
- սոցիալական գործընկերների (գործատուների) ներգրավված լինելը քոլեջի պետական որակավորման հանձնաժողովի կազմում.
- ավարտական կուրսում պրակտիկաների արդյունքում բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողների թվի՝ երեք ուստարիներին գրանցած բարձր արդյունքը.
- պետական ամփոփիչ ստուգումների արդյունքում տվյալ մասնագիտության բարձր առաջադիմություն ունեցող շրջանավարտների թվի քանակական աճի դինամիկան.
- ուսումը ԲՈՒՀ-ում շարունակելու համար երաշխավորված՝ տվյալ մասնագիտության ուսանողների թվի (միջին մասնագիտական կրթական

ծրագրով) ուղիղ համեմատական լինելը երաշխավորված ուսանողներից ԲՈՒՀ-ում ուսումը շարունակած՝ տվյալ մասնագիտության շրջանավարտների թվին.

- ավարտական պրակտիկաների արդյունքում շրջանավարտներին տվյալ գործընկերոջ մոտ աշխատանքի տեղավորման դեպքերի թվի՝ ըստ ուստարիների աճը:

2. *Քոլեջներում՝ որպես զարգացման ենթակա գործառույթներ հիմնականում նշվել են.*

- ուսումնական տարվա սկզբին, նախորդ երեք ուսումնական տարիների համեմատությամբ, քոլեջի ուսանողների թվի միջին արդյունքը.
- նախորդ երեք ուսումնական տարիների ընթացքում քոլեջի և տվյալ մասնագիտության, ինչպես նաև բարձր առաջադիմությամբ ուսանողների թվի միջին արդյունքը.
- նախորդ երեք ուսումնական տարիների ընթացքում ավարտական կուրսում պրակտիկաների արդյունքում բարձր առաջադիմություն ցուցաբերած ուսանողների թվի միջին արդյունքը.
- պետական ամփոփիչ ստուգումների արդյունքում տվյալ մասնագիտության բարձր առաջադիմություն ունեցող շրջանավարտների թվի քանակական դինամիկայի միջին արդյունքը.
- նյութատեխնիկական բազայի, այդ թվում՝ մասնագիտական գրականության ոչ պարբերաբար թարմացումները.
- ուսանողների իրազեկվածության ցածր մակարդակը քոլեջի կանոնադրության, ներքին կանոնակարգերի, ոլորտում զբաղվածության վերաբերյալ տեղեկությունների տրամադրման գործընթացների վերաբերյալ.
- կարիերայի ուղղորդման կենտրոնի ոչ լիարժեք համագործակցությունը ուսանողների հետ.
- մասնագիտական հմտությունների կատարելագործմանը նպաստող սարքավորումների և տեխնիկական հնարավորությունների ոչ լիարժեք առկայությունը արտադրական (մասնագիտական) ուսուցման դասաժամերին.

- վերապատրաստման գործընթացին դասախոսների մասնակցության միջին արդյունքը.
- ավարտական պրակտիկաների արդյունքում շրջանավարտներին տվյալ գործընկերոջ մոտ աշխատանքի տեղավորման դեպքերի միջին արդյունքը.
- պրակտիկայի ընթացքում արտադրական գործընթացին մասնակցության պասիվությունը.
- պրակտիկաների պակաս արդյունավետությունը.
- տվյալ մասնագիտությամբ լրացուցիչ կրթական ծրագրերի բացակայությունը քոլեջում.
- տվյալ մասնագիտության մասնագիտական առարկաների համապատասխան որակավորում չունեցող դասախոսների առկայությունը.
- սոցիալական գործընկերների (գործատուների) ներգրավված չլինելը քոլեջի պետական որակավորման հանձնաժողովի կազմում.
- կրթական գործընթացում սոցիալական գործընկերների պասիվ ներգրավումը:
- Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության և միջին մասնագիտական կրթության ոլորտներում առկա հիմնական ռիսկերը՝ հաստատություններում.
- համապատասխան որակավորում չունեցող մանկավարժական աշխատողների,
- իրենց պաշտոնային պարտականությունները ոչ պատշաճ կատարող տնօրենների առկայությունն է:

Համապատասխան մասնագիտական որակավորում չունեցող մանկավարժական աշխատողների, իրենց պաշտոնային պարտականությունները ոչ պատշաճ կատարող տնօրենների դեպքում հաստատություններում սահմանված կարգի խախտումներով են ընթանում սովորողների ընդունելության, տեղափոխման, պետական ամփոփիչ քննությունների կազմակերպման և անցկացման, չափորոշչային պահանջների համապատասխանեցման և այլ գործընթացներ:

Թվարկված գործընթացները չեն կարող չազդել ուսանողների կողմից կրթական ծրագրերի յուրացման և կրթության որակի վրա:

7.3.2. ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Ռիսկերի նվազեցման, ուսումնական հաստատությունների գործունեության արդյունավետության և դրանից բխող՝ կրթության որակի բարձրացման նպատակով նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում իրականացված 12 ստուգումների (որից 4-ը՝ հանձնարարականների կատարման նկատմամբ ստուգում) արդյունքում արձանագրվել է 95 խախտում, տրվել է 33 հանձնարարական (աղյուսակ 4):

Աղյուսակ 4

ՍՏՈՒԳՎԱԾ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹԻՎԸ	ՀԱՅՏՆԱԲԵՐՎԱԾ ԽԱԽՏՈՒՄՆԵՐԻ ԹԻՎԸ	ՏՐՎԱԾ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԹԻՎԸ
12	**95**	**33**

2023 թվականի առաջին 3 եռամսյակներում ստուգված 12 հաստատություններից 4-ի դեպքում ՀՀ կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների խախտումներ չեն արձանագրվել, իսկ 2 հաստատությունների դեպքում՝ հանձնարարականներ չեն տրվել: Ստուգված 12 հաստատություններից 5-ի դեպքում տրված հանձնարարականների կատարման ժամկետը լրացել է 2023 թվականի առաջին 3 եռամսյակներում: Մեկ հաստատության 2 հանձնարարականների վերաբերյալ տեղեկատվություն չի ներկայացվել:

ՀԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐԻ ԹԻՎԸ

ՏՐՎԱԾ	ԿԱՏԱՐՎԱԾ	ԸՆԹԱՑՔԻ ՄԵՋ ԳՏՆՎՈՂ
21	**15**	**6**

Նախնական մասնագիտական և միջին մասնագիտական կրթության ոլորտներում ընթացքի մեջ են հիմնականում կադրային նշանակումներին վերաբերող հանձնարարականները:

7.3.3. ՆԱԽՆԱԿԱՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ (ԱՐՀԵՍՏԱԳՈՐԾԱԿԱՆ) ԵՎ ՄԻՋԻՆ ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐՈՒՄ ՌԻՍԿԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՆԱԽԱՏԵՍՎՈՂ ՏԱՐԵԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Նախնական մասնագիտական (արհեստագործական) կրթության և միջին մասնագիտական կրթության ոլորտների ստուգվող ՆՄԱՈՒՀ-ներում և ՄՄՈՒՀ-ներում նախատեսվում է շրջանավարտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների՝ ժամանակակից պահանջներին համապատասխանության և ուսումնական պրակտիկայի արդյունավետ կազմակերպման գնահատում՝ ըստ գործատուների գնահատման արդյունքների: Գնահատումը կիրականացվի՝ ըստ լիցենզիայով հատկացված և իրականացվող որևէ մասնագիտության:

- Կիրականացվեն ՆՄԱՈՒՀ և ՄՄՈՒՀ ստուգաթերթերի և ոլորտի իրավական ակտերի վերաբերյալ իրազեկման աշխատանքներ:
- Կլրամշակվեն ՆՄԱՈՒՀ-ներում և ՄՄՈՒՀ-ներում անցկացվող ստուգումների ստուգաթերթերը:

Համաձայն 2024 թվականի ստուգումների տարեկան ծրագրի՝ ստուգումներ կիրականացվեն ՀՀ 1 ՆՄԱՈՒՀ-ում և 11 ՄՄՈՒՀ-ներում:

Ըստ անհրաժեշտության կիրականացվեն նաև նախորդ ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների վերացման վերաբերյալ տեսչական մարմնի ղեկավարի կողմից տրված հանձնարարականների պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելուն ուղղված ստուգումներ:

Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատություններում վերահսկողությունն առավել արդյունավետ իրականացնելու, այդ թվում՝ դասախոսներին տեղում մեթոդական աջակցություն ցուցաբերելու, դասավանդման ընթացքում առաջացած խնդիրների բարձրաձայնման և դրանց լուծմանը միտված առաջարկությունների ներկայացման, կրթության կազմակերպման, ինչպես նաև ուսուցման և ուսումնառության որակը բարձրացնելու նպատակով նախատեսվում է «Աջակցություն ուսուցման կազմակերպմանը» ծրագիրը (այսուհետ՝ ծրագիր) իրականացնել նաև նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում:

Այս գործընթացի շրջանակներում, 2024 թվականի I-III եռամսյակներում կմշակվեն նշված ոլորտներում ծրագրի իրականացման հայեցակարգը, ծրագրի շրջանակում կիրառվող գնահատման ձևաթղթերը, դասալսում իրականացնող մասնագետների ներգրավման ընթացակարգը:

- Ծրագիրը՝ «Ձեռներեցություն» առարկայի մասով՝ կփորձարկվի 2024 թվականի ստուգումների տարեկան ծրագրով IV եռամսյակում նախատեսված ստուգումների ընթացքում:
- Դասալսումները կիրականացվեն այն կուրսերում, որտեղ ուսումնական պլանով նախատեսված կլինի «Ձեռներեցություն» առարկան:
- Ներգրավված (դասալսող) մասնագետները դասալսումների արդյունքում կներկայացնեն սովորողների ուսումնառության, դասախոսների դասավանդման և կրթության բովանդակության և կազմակերպման որակի վերաբերյալ եզրակացություններ, որոնց վերլուծության արդյունքում

տեսչական մարմնի կողմից առավել ճշգրիտ կներկայացվեն «Ձեռներեցություն» առարկայի ուսուցման և ուսումնառության առկա վիճակը, բացահայտված խնդիրները, դրանց լուծմանն ուղղված առաջարկությունները:

- Ուսումնական հաստատություններին կներկայացվեն կրթական գործընթացի կազմակերպման՝ զարգացման ենթակա (թույլ) կողմերը բարելավելու ուղղությամբ հասցեական առաջարկություններ:

8. ԸՆԹԱՑԻԿ ՏԱՐՎԱ ՍՏՈՒԳՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ (I, II, III ԵՌԱՄՍՅԱԿՆԵՐ)

ԿՏՄ կողմից իրականացվել է 103 ստուգում՝



Ստուգումների տարեկան ծրագրով իրականացված ստուգումները 97-ն են, որը կազմում է 2023 թվականի ստուգումների տարեկան ծրագրով նախատեսված 140 ստուգումների 69%-ը, իրականացված ստուգումների 94%-ը: Իրականացված ծրագրային ստուգումներից 11-ը ՆՈՒՀ-եր են, 79-ը՝ ՀՈՒՀ-եր, 6՝ ՄՄՈՒՀ-ներ, 1-ը՝ ՆՄԱՈՒՀ:



Ստուգումների տարեկան ծրագրով չնախատեսված ստուգումներն իրականացվել են ԿՏՄ-ին ուղղված դիմումի (1՝ 1%), լիազոր մարմնից ստացված գրության (1՝ 1%) հիման վրա, ինչպես նաև 2022 թվականին իրականացված ստուգումների արդյունքում հայտնաբերված խախտումների հետևանքների վերացման վերաբերյալ տեսչական մարմնի ղեկավարի կողմից տրված հանձնարարականների (մասամբ կատարված) պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելու նպատակով (4՝ 4%):

9. ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՌԿԱ ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ, ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

- Տեսչական մարմնում լրամշակվել և Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակ է ներկայացվել «Կրթության բնագավառի պետական վերահսկողության մասին» ՀՀ օրենքի նախագիծը:
- Տեսչական մարմինների աշխատանքների համակարգման գրասենյակի հետ համատեղ մշակվել է ռիսկի վրա հիմնված ստուգումների մեթոդաբանությունը, լրամշակման փուլում են բոլոր ոլորտների ստուգումների անցկացման ստուգաթերթերը:
- ԿՏՄ կողմից ՀՀ կառավարությանը և քաղաքականություն մշակող պետական մարմիններին (վերջիններիս առաջարկով, ինչպես նաև սեփական նախաձեռնությամբ) ներկայացվել են օրենսդրական փոփոխությունների առաջարկություններ, դիտարկումներ՝ 53 իրավական ակտերի վերաբերյալ:

- Միաժամանակ, ԿԳՄՍՆ-ին տեղեկացվել է ԿՏՄ կողմից իրականացված ստուգումների արդյունքում հանդիպած խնդիրների մասին, առաջարկվել է ձեռնարկել համապատասխան միջոցներ և արդյունքների մասին տեղյակ պահել տեսչական մարմնին: Մասնավորապես՝
    - ուսումնական հաստատության լիցենզիայի ներդիրում միջին մասնագիտական կրթական ծրագրերով մասնագիտությունների անվանումները, ինչպես նաև մասնագիտության ուսուցման ավարտին տրվող որակավորումը չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2006 թվականի հունվարի 12-ի №73-Ն որոշմամբ հաստատված «Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության մասնագիտությունների ցանկի» պահանջներին.
    - ուսումնական հաստատությունը իրականացնում է միջին մասնագիտական կրթական ծրագրով մասնագիտություն, որի համար չկա հաստատված պետական կրթական չափորոշիչ,
    - քանի որ հիմնադրամներն ունեն և՛ հոգաբարձուների խորհուրդ, և՛ գիտական խորհուրդ, ուստի նպատակահարմար է հիմնադրամի կազմում գործող նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ստորաբաժանումների կանոնակարգերում տարանջատել վերջիններիս լիազորությունների շրջանակը, սահմանել հիմնադրամների հոգաբարձուների և գիտական խորհուրդների լիազորությունների շրջանակը, մանկավարժական աշխատողների և ուսանողների իրավունքներն ու պարտականությունները:

10. ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Կրթության ոլորտը կարգավորող ՀՀ օրենսդրության վերաբերյալ իրազեկելու՝ հնարավոր խախտումները կանխելու, հանրային շահերի պաշտպանությունն ապահովելու նպատակով ԿՏՄ 2023 թվականի գործունեության տարեկան ծրագրով նախատեսված կանխարգելիչ և իրազեկման միջոցառումներն իրականացվել են:

Պահպանվում է կանխարգելիչ, իրազեկման միջոցառումների ձևաչափը: Ուսումնական հաստատությունների ղեկավար կազմի համար իրականացվող խորհրդատվական և իրազեկման միջոցառումներից առաջ մասնակիցներին նախապես տրամադրվում է խորհրդատվական հանդիպման օրակարգը, ներկայացվելիք նյութերը: Մասնակիցները, օրակարգին ծանոթանալուց հետո, իրենց հարցերը գրավոր ձևով ուղղում են ԿՏՄ կայքէջին, իսկ հանդիպման ընթացքում՝ ստանում դրանց սպառիչ պատասխանները:

Մասնագիտական ստորաբաժանումների կողմից յուրաքանչյուր եռամսյակ հանրության հետ կապերի բաժնին են փոխանցվում ուսումնական հաստատությունների կողմից առավել շատ բարձրացված 5 հարցերն՝ իրենց պատասխանների հետ միասին: Հանրության հետ կապերի բաժինը, կնքված հուշագրի շրջանակներում, դրանք փոխանցում է «Գործք» ամսագրի խմբագրությանը՝ լուսաբանելու նպատակով:

Վերահսկողության ոլորտներում իրականացված կանխարգելիչ և իրազեկման գործառույթների քանակական պատկերն, ըստ վերահսկողության ոլորտների, ներկայացված է ստորև բերված աղյուսակում.

ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՆԵՐ	ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐ
ՆՈՒՀ	3
ՀՈՒՀ	4
ՆՄԱՈՒՀ ԵՎ ՄՄՈՒՀ	4
ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆՆԵՐ	6

- **2024 թվականին նախատեսվում են իրականացնել ծնողների հետ հանդիպումներ՝ նոր ձևաչափով:**

Հանդիպումները բաղկացած կլինեն 3 փուլից:

- **Առաջին փուլում** կներկայացվեն ծնողների պարտականություններին և իրավունքներին վերաբերող իրավակարգավորումները (սահիկաշարի ներկայացում, հարց ու պատասխան),
- **երկրորդ փուլում՝** իրական դեպքերի հիման վրա կազմված կոնֆլիկտային իրավիճակներ (դերային խաղեր),
- **երրորդ փուլում՝** ծնողների հետ հետադարձ կապի ապահովման նպատակով կտրվեն իրավիճակային հանձնարարություններ:

11. ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ

Հայաստանի Հանրապետության կրթության տեսչական մարմնի վերահսկողության ոլորտներում 2024 թվականի խնդիրների և ռիսկերի նվազեցմանն ու վերացմանն ուղղված միջոցառումների

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Նպատակը և ակնկալվող արդյունքը	Կատարողը	Համակատարողը	Ժամկետը
1	2	3	4	5	6
1.	ԿՏՄ 2024 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ներառված 6 ՆՈՒՀ-երում ստուգումներ	ՆՈՒՀ-երի կողմից կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանման ապահովում, կրթության որակի բարձրացում	ՀՎ	ԻԱՓՎ ՌԳՍՊՎԳՎ	Տարվա ընթացքում
2.	Ստուգվող ՆՈՒՀ-երում իրականացված ներքին գնահատման ընթացակարգի ուսումնասիրություն, ըստ մշակված ձևաթղթերի	ՆՈՒՀ-երի ներքին գնահատման աշխատանքներին աջակցում	ՀՎ	ԻԱՓՎ ՌԳՍՊՎԳՎ	Տարվա ընթացքում
3.	ՆՈՒՀ կրթադաստիրակչական միջավայրի որակի գնահատման ռուբրիկի մշակում և փորձարկում	Նախադպրոցական կրթության պետական չափորոշչով սահմանված պահանջների ապահովման մակարդակի գնահատում	ՀՎ	ԻԱՓՎ ՌԳՍՊՎԳՎ	Մշակում՝ I եռամսյակ, փորձարկում՝ տարվա ընթացքում
4.	Համայնքապետարանների աշխատակազմերի կրթության հարցերով զբաղվող ստորաբաժանումներում հանրակրթության բնագավառը կարգավորող օրենսդրության պահանջների պահպանման վերաբերյալ բացատրական աշխատանքների իրականացում (ՀՀ Շիրակի մարզի Արթիկ, Արագածոտնի մարզի Թալին, Լոռու մարզի Ալավերդի,	ՏԻՄ աշխատակիցների՝ կրթության բնագավառը կարգավորող օրենսդրության վերաբերյալ իրավագիտակցության բարձրացում	ՀՎ	ԻԱՓՎ ՀՀԿԲ ՌԳՍՊՎԳՎ	II, III եռամսյակներ

	Արարատի մարզի Արտաշատ, Արմավիրի մարզի Մեծամոր)				
5.	ԿՏՄ 2024 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ներառված 112 ՀՈՒՀ-երում ստուգումներ	ՀՈՒՀ-երի կողմից կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանման ապահովում, կրթության որակի բարձրացում	ՀՎ	ԻԱՓՎ ՌԳՍՊՎԳՎ	Տարվա ընթացքում
6.	Ստուգվող 40 ՀՈՒՀ-երի 6-րդ, 9-րդ, 11-րդ դասարաններում «Հայոց լեզու» («Մայրենի», «Գրականություն», «Հայ գրականություն») և «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») առարկաներից դասալսումներ (ԱՈՒԿ ծրագիր)	Առարկայական ծրագրերի յուրացման ապահովմանը և ուսուցման կազմակերպմանը աջակցում	ՀՎ	ԻԱՓՎ ՌԳՍՊՎԳՎ	I, II, IV եռամսյակներ
7.	Ստուգվող առնվազն 40 ՀՈՒՀ-երի 6-րդ, 9-րդ և 11-րդ դասարաններում սովորողների մնացորդային գիտելիքների ստուգում «Հայոց լեզու» և «Մաթեմատիկա» («Հանրահաշիվ», «Երկրաչափություն») առարկաներից (գրավոր աշխատանք)	Ուսումնառության որակի բարելավմանը, չափորոշչային պահանջների ապահովմանն աջակցում	ՀՎ	ՌԳՍՊՎԳՎ	Տարվա ընթացքում
8.	Ստուգվող ՀՈՒՀ-երում ներառական կրթական միջավայրի գնահատում՝ ըստ լրամշակված ձևաթղթի	ՀՈՒՀ-երում ներառական կրթական միջավայրի ապահովմանն աջակցություն	ՀՎ	ԻԱՓՎ ՌԳՍՊՎԳՎ	Լրամշակում՝ I եռամսյակ, փորձարկում՝ տարվա ընթացքում
9.	ՀՈՒՀ-ի կրթական գործընթացի որակի գնահատման ռուբրիկի մշակում և փորձարկում	ՀՊՁ-ով սահմանված միջնակարգ կրթության կարողունակությունների ապահովման մակարդակի գնահատում	ՀՎ	ՌԳՍՊՎԳՎ	Մշակում՝ I եռամսյակ, փորձարկում՝ տարվա ընթացքում
10.	ՀՈՒՀ ստուգաթերթերի վերակշռավորում	«Հանրակրթության մասին» օրենքի 5-րդ հոդվածով սահմանված՝ հանրակրթության	ՌԳՍՊՎԳՎ	ՀՎ	Վերակշռավորում՝ I կիսամյակ,

		բնագավառում պետության կողմից երաշխավորված սկզբունքներին համապատասխանեցում			փորձարկում՝ II կիսամյակ
11.	Հանրությունից ստացված դիմումների, հարցումների, բողոքների քննարկում, պարզաբանում, ուսումնասիրություն, ստուգում	Դիմումներում բարձրացված հարցերի լուծում, խնդիրների վերհանում	ՀՎ ՆՄՄԿՎ	ԻԱՓՎ ՌԳՍՊՎԳՎ	Տարվա ընթացքում
12.	ՀՈՒՀ-երի գնահատման սանդղակ	ՀՈՒՀ-երում պետության կողմից երաշխավորված սկզբունքների ձևավորման մակարդակի գնահատում	ՌԳՍՊՎԳՎ	ՀՎ	Սանդղակի մշակում՝ I կիսամյակ, փորձարկում 6 ՀՈՒՀ-երում՝ II կիսամյակ
13.	ԿՏՄ 2024 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ներառված 12 ՆՄԱՈՒՀ-ներում և ՄՄՈՒՀ-ներում ստուգում	ՆՄԱՈՒՀ-ների և ՄՄՈՒՀ-ների կողմից կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրությամբ սահմանված պահանջների պահպանման ապահովում, կրթության որակի, կրթության կազմակերպման արդյունավետության բարձրացում	ՆՄՄԿՎ	ԻԱՓՎ ՌԳՍՊՎԳՎ	Տարվա ընթացքում
14.	Ստուգվող ՆՄԱՈՒՀ-ներում շրջանավարտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների՝ ժամանակակից պահանջներին համապատասխանության և ուսումնական պրակտիկայի արդյունավետ կազմակերպման գնահատում՝ ըստ գործատուների գնահատման արդյունքների	Կրթական գործընթացի կազմակերպման արդյունավետության գնահատում, շրջանավարտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների՝ ժամանակակից պահանջներին համապատասխանությանը և ուսումնական պրակտիկայի արդյունավետ կազմակերպմանն աջակցություն	ՆՄՄԿՎ	ԻԱՓՎ ՌԳՍՊՎԳՎ	Տարվա ընթացքում
15.	Ստուգվող ՄՄՈՒՀ-ներում շրջանավարտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների՝ ժամանակակից պահանջներին	Կրթական գործընթացի կազմակերպման արդյունավետության գնահատում, շրջանավարտների մասնագիտական գիտելիքների և կարողությունների՝	ՆՄՄԿՎ	ԻԱՓՎ ՌԳՍՊՎԳՎ	Տարվա ընթացքում

	համապատասխանության և ուսումնական պրակտիկայի արդյունավետ կազմակերպման գնահատում՝ ըստ գործատուների գնահատման արդյունքների	ժամանակակից պահանջներին համապատասխանությանը և ուսումնական պրակտիկայի արդյունավետ կազմակերպմանն աջակցություն			
16.	Նախնական մասնագիտական (արհեստագործական) և միջին մասնագիտական կրթության ոլորտներում ԱՈՒԿ ծրագրի իրականացման նախապատրաստական աշխատանքներ	Առարկայական ծրագրերի յուրացման ապահովմանը և ուսուցման կազմակերպմանը աջակցում	ՆՄՄԿՎ	ԻԱՓՎ ՌԳՍՊՎԳՎ	Գործիքակազմի մշակում՝ I-III եռամսյակներ, փորձարկում՝ IV եռամսյակ
17.	Տեսչական մարմնի կառուցվածքային ստորաբաժանումների կողմից կազմվող փաստաթղթերի նախագծերի, կրթության որակի և չափորոշիչների բարելավման, ինչպես նաև գործող իրավական ակտերում փոփոխություններ և լրացումներ կատարելու անհրաժեշտության վերաբերյալ ներկայացված կարծիքների, առաջարկությունների իրավական քննարկում և դրա հիման վրա հիմնավորված գրավոր եզրակացության ներկայացում	Կրթության բնագավառի օրենսդրության բարելավմանն աջակցում	ԻԱՓՎ	Կառուցվածքային ստորաբաժանումներ	Տարվա ընթացքում
18.	Ուսումնական հաստատությունների ռիսկերի գնահատման արդյունքների վերլուծության հիման վրա տեսչական մարմնի կողմից ստուգումների իրականացման տարեկան ծրագրի կազմում և սահմանված կարգով հաստատման ներկայացում	Վերահսկողական գործառույթների նպատակադրում դեպի առավել ռիսկային ոլորտներ և ուսումնական հաստատություններ	ՌԳՍՊՎԳՎ	Կառուցվածքային ստորաբաժանումներ	IV եռամսյակ
19.	Վերհսկողական գործառույթների արդյունքում բացահայտված խախտումների հետևանքների վերացման	Տեսչական մարմնի կողմից վերահսկվող ուսումնական հաստատությունների ռիսկայնության որոշում և դասակարգում՝ առկա	ՌԳՍՊՎԳՎ	---	Տարվա ընթացքում

	նպատակով տրված հանձնարարականների կատարման վերաբերյալ ուսումնական հաստատություններից ստացված կատարողականների (գրությունների) հիման վրա ռիսկերի վերագնահատում (ըստ անհրաժեշտության)	տեղեկատվության և սահմանված չափորոշիչների հիման վրա			
20.	Իրականացված կանխարգելիչ, իրազեկման և վերհսկողական գործառույթների ազդեցության գնահատում	Իրականացված գործառույթները որքանով են նպաստել ԿՏՄ կանոնադրական նպատակների կատարմանը	ՀՀԿԲ	-----	I, II կիսամյակներ
21.	Տեսչական մարմնի ղեկավարի կողմից ուսումնական հաստատություններին տրված՝ նախկին ստուգմամբ հայտնաբերված թերությունների և խախտումների հետևանքների վերաբերյալ տրված հանձնարարականների (կարգադրագրի) պահանջների կատարման փաստացի վիճակը պարզելուն ուղղված ստուգումներ (ըստ անհրաժեշտության)	Հետադարձ կապի ապահովում	ՀՎ ՆՄՄԿՎ	ՌԳՍՊՎԳՎ ԻԱՓՎ	Տարվա ընթացքում
22.	Ստուգաթերթերի լրամշակում	Կրթության բնագավառը կարգավորող ՀՀ օրենսդրության պահանջների փոփոխություններին համապատասխանեցում	ԻԱՓՎ	ՀՎ ՆՄՄԿՎ ՌԳՍՊՎԳՎ	I եռամսյակ

Հավելված 6

ՀՀ կրթության տեսչական մարմնի կառավարման խորհրդի
2023 թվականի նոյեմբերի 30-ի N 20-Լ որոշման

12. ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ՏԵՍՉԱԿԱՆ ՄԱՐՄՆԻ
2024 ԹՎԱԿԱՆԻ ԿԱՆԽԱՐԳԵԼԻՉ ԵՎ ԻՐԱԶԵԿՄԱՆ

Հ/Հ	Միջոցառման անվանումը	Նպատակը և ակնկալվող արդյունքը	Կատարող	Համակատարող	Ժամկետ
1	2	3	4	5	6
1.	2024 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ներառված հանրակրթական ուսումնական հաստատությունների (ՀՈՒՀ) տնօրենների համար խորհրդատվական հանդիպում՝ ոլորտի օրենսդրության պահանջների պահպանման և հաճախակի հանդիպող խախտումների վերաբերյալ (առկա/հեռավար)	Ստուգումներից առաջ ստուգումների և ոլորտի օրենսդրության պահանջների պահպանման(իրավական ակտերի փոփոխությունները, սահմանված կարգով կիրառումը և այլն) վերաբերյալ իրազեկվածության բարձրացում	ՀՎ	ՀՀԿԲ	I և III եռամսյակներ
2.	2024 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ներառված նախադպրոցական ուսումնական հաստատությունների (ՆՈՒՀ) տնօրենների համար խորհրդատվական հանդիպում՝ ՆՈՒՀ, ստուգումների պահպանման և ոլորտի օրենսդրության պահանջների և հաճախակի հանդիպող խախտումների վերաբերյալ (առկա/հեռավար)	Ստուգումներից առաջ ՆՈՒՀ ստուգումների և ոլորտի օրենսդրության պահանջների պահպանման(իրավական ակտերի փոփոխությունները, սահմանված կարգով կիրառումը և այլն) վերաբերյալ իրազեկվածության բարձրացում	ՀՎ	ՀՀԿԲ	I եռամսյակ

3.	Հանրակրթական ուսումնական հաստատությունների աշակերտական խորհուրդների ներկայացուցիչների և ծնողների հետ հանդիպումներ	Աշակերտական խորհուրդների և ծնողների իրավունքների և պարտականությունների մասին օրենսդրության պահանջների իրազեկում	ՀՀԿԲ	ՀՎ	II և IV եռամսյակներ
4.	2024 թվականի ստուգումների տարեկան ծրագրում ներառված բոլոր ՆՄԱՈՒՀ-ների և ՄՄՈՒՀ-ների ղեկավար կազմի համար խորհրդատվական հանդիպում (առկա/հեռավար)	Ուսումնական հաստատություններին իրենց գործունեությանն առնչվող, ԿՏՄ իրավասությանը վերաբերող նոր ընդունված իրավական ակտերի կամ փոփոխությունների կամ լրացումների վերաբերյալ իրազեկում	ՆՄՄԿՎ	ՀՀԿԲ	I եռամսյակ
5.	Տավուշի, Լոռու, Շիրակի, Արագածոտնի մարզերի բոլոր ՆՄԱՈՒՀ-ների և ՄՄՈՒՀ-ների ղեկավար կազմի համար խորհրդատվական հանդիպում (առկա/հեռավար)	Ուսումնական հաստատությունների հետ իրավական ակտերով սահմանված պահանջների վերաբերյալ բացատրական աշխատանքների իրականացում, կոնկրետ հարցերով խորհրդատվության մատուցում Ուսումնական հաստատություններում առաջացած խնդիրների վերհանում (հաճախ հանդիպող խախտումներ), քննարկում, լուծմանն ուղղված առաջարկությունների ներկայացում	ՆՄՄԿՎ	ՀՀԿԲ	II եռամսյակ
6.	Սյունիքի, Վայոց ձորի, Գեղարքունիքի, Կոտայքի մարզերի բոլոր ՆՄԱՈՒՀ-ների և ՄՄՈՒՀ-ների ղեկավար կազմի համար խորհրդատվական հանդիպում (առկա/հեռավար)		ՆՄՄԿՎ	ՀՀԿԲ	III եռամսյակ
7.	Արմավիրի, Արարատի մարզերի և Երևանի բոլոր ՆՄԱՈՒՀ-ների և ՄՄՈՒՀ-ների ղեկավար կազմի համար խորհրդատվական հանդիպում (առկա/հեռավար)		ՆՄՄԿՎ	ՀՀԿԲ	IV եռամսյակ
8.	Իրազեկում-հանդիպումների կազմակերպում միջին մասնագիտական ուսումնական հաստատությունների ուսանողների հետ (երկու հանդիպում)	Հանրության առավել ակտիվ խավի իրազեկում, իրավագիտակցության բարձրացում, ոլորտում առկա խնդիրների վերաբերյալ տեղեկատվության ստացում	ՀՀԿԲ	ՆՄՄԿՎ	Տարվա ընթացքում